

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լեռնագոգ
համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 26-ի
N45 -Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱԳՈԳ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021թթ.
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմել է՝ համայնքի ղեկավար ՍԱՐԳԻՍ ՄԱՐԳԱՐՅԱՆԸ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 45-Ն որոշմամբ

Լեռնագոգ համայնք - 2016թ.

Ներածություն

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադրաձնելու նպատակով: ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանումն ըստ կատարողների, ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատակիցներին:

Շնորհակալություն Ձեզ, հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի կազմումը և կատարումը գերակա խնդիր է մեր համայնքում՝ միջնակարգ դպրոցում, մանկապարտեզում, բուժ-ամբուլատորիայում:

Համայնքում 2017-21թթ. նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ՝ դրանք են. համայնքում փողոցային լուսավորության անցկացում, ներհամայնքային փողոցների բարեկարգում, սպորտային հրապարակի կառուցում, ոռոգման ջրերի ներքին ցանցերի նորոգում, նոր ջրազլի կառուցում, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում, նախկին մարկապարտեզի շենքի հիմնանորոգում:

Ծրագրի մշակմանը, քննարկմանն ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում ավագանու, համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի, փոստի, բուժամբուլատորիայի և համայնքի հիմնարկ ձեռնարկությունների աշխատակազմերն ու անհատ քաղաքացիները: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից, համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրները՝ առաջնահերթության կարգով:

Շնորհակալություն:

Համայնքի ղեկավար՝

Սարգիս Մարգարյան

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԿԼԻՄԱՆ

Արմավիրի մարզի Լեռնագոգ համանքը հիմնադրվել է 1978թվականին, տեղակայված է Արտենի լեռան լանջին, բարձրությունը ծովի մակարդակից 1035մ, վարչական տարածքը կազմում է 2298հա: Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 25 կիլոմետր, մայրաքաղաքից 65 կիլոմետր:

Կլիման չոր, խիստ ցամաքային է: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 9-11°C-ի սահմաններում: Շոգ օրերը տևում են ավելի քան չորս ամիս՝ ուղեկցվելով չոր եղանակներով: Հուլիս և օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը 25-30°C է, իսկ առավելագույնը 41.5°C: Տարեկան տեղումները տատանվում են 250-350 մմ-ի սահմաններում: Ձմեռը չափավոր ցուրտ է, հունվարի միջին ջերմաստիճանը -4°C-ից -6 °C է, նվազագույնը -28°C:

1.2 ԿՐՈՆ, ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ

Համայնքի զգալի մեծամասնությունը Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ են: Համայնքի տարածքում գործող եկեղեցիներ չկան: Համայնքն ունի պուրակ՝ Լեռնագոգի մշակույթի տան շրջակայքում: Այստեղ մայիսյան հերոսամարտերի զոհերի հիշատակին նվիրված 2005թ-ին կառուցվել է հուշարձան: 2005թ.-ին համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ բարեկարգվել է հուշարձանի տարածքը և կանգնեցվել է խաչքար նվիրված եղեռնի զոհերի հիշատակին: Այստեղ պարբերաբար կազմակերպվում է ծառատունկ:

1.3 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համայնքում ապրում է 2422 բնակիչ՝ 1159 կին և 1263 տղամարդ: Կյանքի միջին տևողությունը 75 տարի է: Լեռնագոգ համայնքը խիստ բնակեցված չէ: Ընդհանուր առմամբ ակտիվ բնակչությունը կազմում է մոտ 2000 մարդ: Վերջին տարիներին բնակչության քանակը ավելացել է: Լեռնագոգում բնակվող ազգային փոքրամասնություններ չկան:

Հ/Հ	Հիմնական տվյալները	Ընդամենը
1	Բնակչության ընդհանուր թիվը	2422
2	Ակտիվ բնակչություն	1990

3	Արտագաղթում ապրողներ	67
4	Անօթևան ընտանիքներ	0
5	Շտապօգնության կարիք ունեցող անօթևան ընտանիքներ	0
6	Շենքեր (ավելի քան երկու հարկ)	254
7	Մասնավոր շենքեր	285
8	Պետական սեփականություն հանդիսացող շենքերի մակերեսը	3500
9	Շենքերի ընդհանուր մակերեսը	45768

1.4 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ

Լեռնագոգի գյուղատնտեսական նշանակության հողերը հիմնականում չեն մշակվում ոռոգման ջրի սակավության պատճառով: Հիմնականում ոռոգովի են տնամերձ հողամասերը/մեկ հողաբաժինը՝ 0.06հա/ : Տնամերձ հողամասերում պտղատու ծառերը կազմում է 9.0 հա և խաղողի այգիները՝ 2.0հա: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ, թռչնաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղատնտեսության բնագավառում զբաղվում է 250 ընտանիք: Համայնքն ունի շուրջ 590 գլուխ խոշոր և 2600 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Համայնքի վարչական տարածքում գտնվում են բազալտի և խարամի հանքավայրեր:

1.5 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքը մայրաքաղաքին և մարզկենտրոնին կապում է ավտոբուսային երթուղիներով:

Համայնքում առկա են՝

1. Ասֆալտապատ ճանապարհներ – 72000 մ²
2. Վնասված ասֆալտապատ ճանապարհներ – 4000 մ²

Հեռահաղորդակցությունը համայնքում՝

Բջջային հեռախոսակապը, փոստը և ինտերնետ կապը ապահովվում է ներքոնշյալ կազմակերպությունների կողմից.

1. Beeline AM (բջջային և ֆիքսված հեռախոսակապ, ինտերնետ)
2. VivaCell MTS (բջջային հեռախոսակապ և ինտերնետ)

3. Հայփոստ (փոստային ծառայություններ)
4. Ucom (հեռախոսակապ և ինտերնետ)
5. Arpinet(ինտերնետ)
6. REALTIME(ինտերնետ)

1.6 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Լեռնագոգում միջնակարգ դպրոցը հիմնվել է 1979թ.: Համայնքի բնակչության մոտ 15%-ն ունի բարձրագույն կրթություն: Լեռնագոգի <<Օնիկ Փակումեանի անվան>> միջնակարգ դպրոցում սովորում են 252 աշակերտներ:

1.7 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը վերջին տարիներին փոքր ինչ բարելավվել է: Բարձրացել է հարկերի հավաքագրման ցուցանիշը և համայնքային բյուջեն կատարվում է 100 և ավելի տոկոսով: Սակայն վերջինս հնարավորություն է տալիս միայն մասնակի բարելավել համայնքային ենթակառուցվածքների վիճակը: Համայնքում բավականին բարձր է գործազրկության մակարդակը, այն կազմում է մոտ 450 մարդ: Ընտանիքների միջին եկամուտը կազմում է 70-ից 90 հազար դրամ: Բնակչության որոշ մասն աշխատում է մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում, համայնքում գործող արտադրական և սպասարկման ձեռնարկություններում:

1	Նպաստ ստացողներ	102 ընտանիք
2	Հաշմանդամի թոշակ ստացողներ	27
3	Կենսաթոշակառուներ	187

1.8 ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Համայնքում պարբերաբար կազմակերպվում և նշվում են կրթական, մշակութային և սպորտային միջոցառումներ: Մեծ շուքով են նշվում ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումները:

Համայնքում անցկացվում են շախմատի մրցաշարեր:

Երաժշտական դպրոցի սաները մասնակցել են մի շարք հանրապետական մրցույթների և միջոցառումների:

1.9 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է բուժ. ամբուլատորիա

Հ/Հ	Հաստատության անվանումը	Տնօրեն	Ընտանեկան բժիշկների քանակը	Բուժքույրերի, լաբորատոր աշխատողների քանակը	Ադմինիստրացիա
1	Լեռնագոգի բուժ. ամբուլատորիա	1	1	3	2

1.10 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԱՆՄԱՔՐՈՒՄ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի մոտ 70 %-ը կոյուղացված է:

Համայնքում կազմակերպված է կանոնավոր աղբահանություն: Այս աշխատանքները կազմակերպում է համայնքապետարանը: Աղբահանությունն իրականացվում է 1 աղբահան մեքենայով: Փողոցներում տեղադրված են աղբարկղեր: Համայնքն իր տարածքում գործող աղբավայրից է օգտվում:

Լեռնագոգ համայնքը գտնվելով կիսաանապատային գոտում, բնականից աղքատ է կանաչապատ տարածքներից: Հիմնական կանաչապատ տարածքը համայնքում գտնվում է Լեռնագոգի մշակույթի տան տարածքում:

1.11 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի տարածքում գործում է 7 խանութ:

Հիմնականում կարգավորված են այդ խանութների ծխախոտի և ալկոհոլի վաճառքի թույլտվությունները:

Համայնքի բնակչությունը զբաղվում է առևտրի, գյուղատնտեսության արտադրության ոլորտներում:

Համայնքի վարչական տարածքում գործում է <<ԱլեքսԳրիգ>> ՍՊԸ հացամթերքների կոմբինատը:

1.12 ԼԵՌՆԱԳՈԳ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Մշակույթի տուն 1
2. Մանկապարտեզ 1
3. Գրադարան 1
4. Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգ (տրամադրվել է անհատույց օգտագործման)
5. Ներհամայնքային ոռոգման համակարգ (տրամադրվել է անհատույց օգտագործման)
6. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
7. Հուշարձան 1
8. Գերեզմանատուն 1
9. Երաժշտական դպրոց 1

1.13 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Կրթված աշխատուժ
- Գյուղական հանգիստ և ապահով միջավայր
- Որակյալ աշխատուժ
- Ենթակառուցվածքների առկայություն (գազ, ջուր, էլեկտրականություն)
- Արտադրական ձեռնարկությունների առկայություն
- Խմելու ջրի բավարար քանակություն
- Ակտիվ և թափանցիկ գործող և բնակչության վստահությունը վայելող տեղական ինքնակառավարման մարմիններ

1.14 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

- Զբաղվածության ցածր մակարդակ
- Աղքատության բարձր մակարդակ
- Մասնավոր հողակտորներ
- Ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը
- ոռոգման ջրի սակավություն

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարությունը.

Ա) Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային վիճակը և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր:

Բ) Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին:

- Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում, ասֆալտապատում
- Գիշերային լուսավորության ցանցի վերականգնում
- Ոռոգման ցանցի վերանորոգում
- Սպորտ հրապարակների կառուցում
- Հուշարձանի շրջակայքի բարեկարգում
- Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ 2016-2021 ԹԹ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԾՐԱԳԻՐ 1

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ (ՄԱՄՆԱԿԻ) ԵՎ ՆՈՐ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնագոգ գյուղի ոռոգման համակարգը կառուցվել է 1986-ական թվականներին և պարբերաբար վերանորոգվել է: Ջրագծի երկարությունը կազմում է 3,5 կմ: Վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական միջոցների սղության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 30 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը:

Պետք է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ վերանորոգման ենթակա ջրագծի մի մասը ծածկված է հողի շերտով, որտեղ խողովակները ենթարկվում են կոռոզիայի:

Համայնքի հրատապ խնդիրներից է ջրագծերի հիմնական վերանորոգումը և որոշ մասի կառուցումը՝ ապահովելով սեզոնային անխափան ջրամատակարարումը:

Համայնքի գերխնդիրներից է նոր 5 կմ ջրագծի կառուցումը՝ ինքնահոս եղանակով, որը նպատակահարմար է կառուցել <<Սելավ-Մաստարա>> ջրատարից: Եթե ջրագիծը ապահովի 300լ/վ ջրի հոսք, ապա համայնքի վարչական տարածքում

առկա երբևէ չմշակված 580.0հա համայնքապատկան և քաղաքացիների սեփականությունն հանդիսացող հողատարածքները, որոնք ժամանակին մեկտրացվել և քարազատվել են ջրագծի առկայության դեպքում կղառնան մշակովի, կապահովեն ազգաբնակչության հիմնախնդիր դարձած զբաղվածության հարցը, մարդիկ այլ համայնքներում սեփականատերերի այգիներում և վաղ գարնանից մինչև ուշ աշուն սեզոնային վարձու աշխատանք կատարելու փոխարեն կաշխատեն իրենց համայնքում, իրենց սեփական հողի վրա: Ջրագծի կառուցումը համայնքի հետագա տնտեսական զարգացման վրա մեծ ազդեցություն կունենա:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է՝

- Ապահովել համայնքի սեզոնային անխափան ջրամատակարարումը
- Վերացնել խողովակների մաշվածությունից առաջացող ջրի կորուստները
- Ծրագիրը նախատեսվում է իրականացնել՝
 - մասնակի վերանորոգումներով – անհրաժեշտության դեպքում բոլոր տարիների ընթացքում՝ 2017-2019 թթ. ընթացքում:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Ջրի հոսքի ավելացում Թալին-3 հերթափոխից
- Նոր ջրագծի կառուցում <<Սելավ Մաստարա>> ջրատարից՝ ինքնահոս եղանակով:
- Ներհամայնքային ցանցի վերանորոգում Φ 300 տրամաչափի խողովակներով:

ԾՐԱԳԻՐ 2

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 12 կմ-ից ավելի, որից 3.8 կմ-ն կենտրոնական ճանապարհն է: Սկսած 2002-ական թվականներից խմելու ջրի ներքին ցանցը վերանորոգելիս շինարարություն իրականացնելիս քանդվել են ճանապարհները: Ասֆալտապատ փողոցներ համարյա չեն մնացել:

Հաշվի առնելով բնակչության առաջարկը անհրաժեշտություն է առաջացել ասֆալտապատել և շեֆենապատել գյուղի որոշ փողոցներ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրագրի հիմնական նպատակն է՝
- Ապահովել տրանսպորտային միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին
 - Վերացնել փողոցների ջրափոսերը
 - Աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2018-2020թթ.:

ԾՐԱԳԻՐ 3

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում գիշերային լուսավորությունը գործում էր մինչև 2015-ական թվականը՝ մինչև թիվ 2 էլեկտրաէներթակայանի խափանվելը:

Համայնքում տեղադրված են 38 LED լուսատուներ՝ Հրանտ Դինքի և Սևակի փողոցներում,

Հաշվի առնելով բնակչության բազմաթիվ դիմում առաջարկները, այս հնգամյա ծրագրում նախատեսվել է համայնքի գիշերային լուսավորության վերականգնումը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրագրի հիմնական նպատակն է՝
- Վերականգնել վնասված LED լուսատուները
 - Էլեկտրոսյուններով անցկացնել մալուխ (կաբել) կամ փակ լարեր
 - Համայնքի լիարժեք լուսավորությունը ապահովելու համար ախատեսվում է լուսավորությունը համայնքի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 11-րդ ,Ա.Խաչատրյան և Գալշոյան փողոցներում:
 - Նախատեսվում է ձեռք բերել 80հատ հենասյուն, 115 հատ լուսատու և 5750 մ մալուխ և անհրաժեշտ քանակի միակցման դետալներ:
 - Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017-2018թթ.:

ԾՐԱԳԻՐ 4

ՄՊՈՐՏԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Լեռնագոգ համայնքն այքի է ընկել իր մասնակցությամբ սպորտային միջոցառումների, ինչպես մարզային, այնպես էլ հանրապետական մրցաշարերում : Վերջին երկու տարիների ընթացքում Լեռնագոգ համայնքն երկու անգամ արժանացել է ՀՀ նախագահի կողմից սահմանած «Լավագույն գյուղական մանկապարտեզ» մրցանակին: Համայնքում գործում են շախմատի, ֆուտբոլի, ֆրանսիական բոքսի խմբակներ: Համայնքում առկա է միայն դպրոցի մարզադահլիճը, իսկ բացօթյա սպորտային հրապարակ և ֆուտբոլի դաշտ (բացի հանրակրթական դպրոցից) չունի:

Համայնքի երիտասարդության ազատ ժամանակը սպորտով լրացնելու նպատակով այս ծրագրում նախատեսվում է սպորտային հրապարակի կառուցում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սպորտ հրապարակի կառուցումը`

- Մինի ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկետբոլի դաշտերի կառուցում
- Հնարավորությունների սահմաններում ծածկել բնական կամ արհեստական խոտածածկով:

Այս հրապարակի կառուցմամբ էլ ավելի կզարգացվի համայնքում սպորտային միջոցառումների անցկացումը , համայնքի երիտասարդությունը կլինի առողջ և ֆիզիկապես պատրաստված:

- Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018-2019թթ.:

ԾՐԱԳԻՐ 5

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Համայնքի բազմաբնակարան 10 երկհարկանի և մեկ հինգ հարկանի շենքի տանիքների հիմնանորոգում, ազբոշիֆերից տանիքածածկույթի փոխարինում ցինկապատ թիթեղով

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայնքի բազմաբնակարան շենքերը կունենան նոր տանիքներ: Կբարելավվի համայնքի զգալի թվով բնակիչների բնակության պայմանները և որակը:

- Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2020թթ. ընթացքում:

ԾՐԱԳԻՐ 6

ՆԱԽԿԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Համայնքի նախկին մանկապարտեզի շենքի վերանորոգում, ցանկապատի և խաղահրապարակի կառուցում, բակի կանաչապատում

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր մանկապարտեզահասակ երեխաներին հնարավորություն կտրվի հաճախելու մանկապարտեզ, քանի որ ներկայիս վերանորոգված մանկապարտեզ հաճախելու հնարավորություն ունեն ընդամենը 80 երեխաներ: Համայնքի զգալի թվով ընտանիքների կտրվի աշխատանքի հնարավորություն :

- Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017-2020թթ. ընթացքում: